ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--------- 2022 թվականի №-Ա

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի №377Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍՊԱՐՏԱԿ ԱՎՈՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2015 թվականի նոյեմբերի 11-ի «Անհատ ձեռնարկատեր Սպարտակ Ավոյանին ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №377Ա որոշմամբ անհատ ձեռնարկատեր Սպարտակ Ավոյանին (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) տրամադրվել է ռադիոհաճախականության օգտագործման №1139 թույլտվությունը,

բ) անհատ ձեռնարկատերը 2022 թվականի օգոստոսի 12-ի գրությամբ խնդրել է ուժը կորցրած ճանաչել ռադիոհաճախականության օգտագործման №1139 թույլտվությունը,

գ) անհատ ձեռնարկատերը պատշաճ կարգով չի կատարել ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժերի վճարման պարտավորությունը, որը 2022 թվականի օգոստոսի 12-ի դրությամբ կազմում է 932 896 (ինը հարյուր երեսուներկու հազար ութ հարյուր իննսունվեց) դրամ, որից 540 160 (հինգ հարյուր քառասուն հազար հարյուր վաթսուն) դրամ գումարի մասով (հաշվարկված՝ մինչև 2021 թվականի մայիսի 5-ը) առկա է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե գումարի փոխանցումը պարտավորեցնելու մասին Հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 5-ի №164Ա որոշումը,

դ) 2021 թվականի մայիսի 6-ից մինչև 2022 թվականի օգոստոսի 12-ը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժերի վճարման՝ անհատ ձեռնարկատիրոջ պարտավորությունը կազմում է 392 736 (երեք հարյուր իննսուներկու հազար յոթ հարյուր երեսունվեց) դրամ, որից 272 826 (երկու հարյուր յոթանասուներկու հազար ութ հարյուր քսանվեց) դրամը

ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 119 910 (հարյուր տասնինը հազար ինը հարյուր տաս) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետը, 12-րդ և 17.1 հոդվածները, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 11-ի «Անհատ ձեռնարկատեր Սպարտակ Ավոյանին ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №377Ա որոշումը:
2. Անհատ ձեռնարկատիրոջը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում №900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով մինչև 2022 թվականի օգոստոսի 12-ը հաշվարկված 392 736 (երեք հարյուր իննսուներկու հազար յոթ հարյուր երեսունվեց) դրամ պարտքը:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում մտնում անհատ ձեռնարկատիրոջն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
------ 2022թ.